

Ամեն անգամ որ մեր ազգային լրագիրներն այս իմաստով յօդուածներ կհրատարակեն՝ Մանգումէ լրագիրը կպօռայ. «այդ լրագիրները ստախօս են, ժողովուրդը խաբելով ստակ շահելու համար կհրատարակեն այդպիսի յօդուածներ»:

Ժամ է արդ հարցունել Մանգումէի, թէ Անգղիոյ թագուհին ալ հայերը սին յոյսերով քնացնելու եւ անկէ ստակ քաշելո՞ւ համար ըրած է այդ յայտարարութիւնն իւր ճառին մէջ:

Պէտք է խոստովանիլ թէ հայկական խնդրոյն եւրոպական լրագիրներուն եւ մանաւանդ Անգղիոյ խորհրդարանին մէջ մուտքն արդիւնք է այն անխոնջ ջանքերու, գորս ի գործ դրած են Պատրիարքը, հայ գրագէտներն եւ Լօնդրայի ազգայիները: Թող Մանգումէ այդպէս հաւատայ, թէ հայկական խնդիրն ինքն իրմէ ծագեցաւ, ինքնիրմէ մտաւ եւրոպական լրագիրներու եւ Անգղիոյ խորհրդարանին մէջ: Իսկ եթէ իրմէ գատ ուրիշ հաւատացող մը գտնէ՝ թող բարեհաճի զայն ցոյց տալ մեզ:

29 Օգոստոս

Չեմ յիշեր Հայաստանի ո՛ր կողմը քայմաքամ մը իւր պաշտօնատեղին գնացած ժամանակը աւագակներէ կողոպտուեր է:

Աւագակներն իրենց պաշտօնակիցը մերկացնելով ըսած են անոր.

–Մեզի դէմ միշտ գանգատներ կգրուին Կ. Պօլիս, իսկ քեզի համար շնորհակալութեան նամակներ. մինչդեռ դու եւ մենք միեւնոյն արիեստը կգործածենք տարբեր եղանակներով:

Քայմաքամը խօսք տալով, որ անոնց ալ *քայմաքամութիւն* մը տրուելուն համար պիտի աշխատի՝ օձիքը կ'ազատէ:

30 Օգոստոս

Ալպանիացիները որոշած են դիմադրութիւն ընել նաւային ցոյցին, որ այսօր կամ վաղը տեղի պիտի ունենայ:

31 Օգոստոս

Նաւային ցոյցը չգործադրուեցաւ այսօր: